



Ընթացիկ տարվա ապրիլի 1-3-ը, Երևանում կայացավ Հայ Բարեգործական Ընդհանուր Միության 88-րդ ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում էին 150-ից ավելի պատվիրակներ աշխարհի տարբեր երկրներից: Ժողովում Վրաստանը ներկայացնում էր Վիրահայոց թեմի երիտասարդական բաժնի պատվիրակությունը՝ տնօրեն Վալերի Բադալյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում ընդգրկված էին երիտասարդական բաժնի աշխատանքների համակարգող Նինա Սերոպովան, Վրաստանի երիտասարդ դիվանագետների ակումբի ղեկավար Գիորգի Թումասյանը, թարգմանչուհի Մարինա Սարգսյանը, բաժնի ակտիվիստներ Ռևիկ Կարապետյանը և Սերգեյ Նաջարովը:

ՀԲՄ ընդհանուր ժողովին իրենց ներկայությունն էին բերել Գերաշնորհ Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, ՀԲՄԸ նախագահ Բերձ Սեդրակյանը, TUMO կենտրոնի հիմնադիր Սեմ Սիմոնյանը, հայ մեծ բարերար Ռուբեն Վարդանյանը:

Թիվ 88 ընդհանուր ժողովի շրջանակներում պատվիրակությունների անդամները այցելեցին



